**Հուշագիր՝ Արմավիրի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Բուրգենլանդ շրջանի (Զաքսեն-Անհալթ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) միջև համայնքային զարգացման գործընկերության հաստատման համար**

Նախաբան

Համընդհանուր շահերի համայնքային ծառայությունները, քաղաքային ծառայությունների հետ համատեղ ստեղծելու են մարդկության համակեցության համար էական նշանակություն ունեցող անհրաժեշտ միջոցներ և ծառայություններ: Հանրային ծառայությունների մատուցման այս տեսակն ու չափը ենթակա է պայմանների անընդհատ փոփոխության, որի վրա իրենց ազդեցությունն են ունենում տարածաշրջանային և նաև գլոբալ գործոններ: Փոփոխությունների այս տեմպը մեզ մարտահրավերներ է նետում՝ հարմարվել փոփոխվող պայմաններին և շարունակաբար զարգացնել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հանրային ծառայությունների ոլորտը:Հայաստանի Հանրապետությունում Արմավիրի մարզը և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Բուրգենլանդ շրջանը, տարիներ շարունակ դիմակայել են մարտահրավերներին՝ յուրաքանչյուրը իր տարածաշրջանի գրավչությունը պահպանելու և բարձրացնելու,ինչպես նաև տարածաշրջանի բնակչության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

Կողմերը ճանաչում են հնարավորությունը,համայնքային զարգացման գործընկերության շրջանակներում փորձի փոխանակման և գիտելիքների փոխանցման միջոցով կարողանալ միմյանց աջակցել և միմյանցից սովորել:

Հոդված 1

Հետևաբար, համայնքային շահերի զարգացման համար ծառայությունների ընտրված ոլորտներում նշված կողմերը պայմանավորվում են գիտելիքների և կարողությունների փոխանակման շուրջ՝ դարձնել այն ավելի արդյունավետ և ամուր, ինչպես նաև գյուղական բնակավայրերում ապրող բնակիչների տնտեսական աճի, համապատասխան աշխատանքային և կենսական պայմանների համար կատարել բարեփոխումներ:

Կողմերը ցանկանում են համագործակցել հավասարության, փոխշահավետության, փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա՝ հարգելով և պահպանելով տարածաշրջանային առանձնահատկություններն ու ավանդույթները:

Հոդված 2

Կողմերը ցանկանում են փոխհամագործակցել հետևյալ ոլորտներում:

1. Ուսուցում և մասնագիտական կրթություն
2. Արդյունավետ և էկոլոգիապես մաքուր թափոնների բեռնափոխադրում:
3. Ուռոգման համակարգեր և խաղողագործության մեջ երիտասարդ գիտական ներուժի ձեռքբերում:
4. ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտների զարգացում և պահմանում, դրանց զբոսաշրջային շուկայավորում:

Հոդված 3

Համագործակցությունը պետք է իրականացվի փոքր մասնագիտական խմբերով: Նպատակը համագործակցության իրականացմանն ուղղված փորձի հավաքագրումն է և փոխանակումը: Գործընկեր կողմերի պետական կառույցները պատասխանատվություն են ստանձնում տարեկան առնվազն մեկ անգամ ներկայանալ զարգացման վիճակի և արդյունքների մասին զեկույցով:

Հոդված 4

Բուրգենլանդ տարածաշրջանը մտադիր է վերոնշյալ կոնկրետ նպատակները ներառել համայնքային կայուն զարգացման և գլոբալ հանձնառության «NAKOPA» ֆինանսավորման ծրագրում:
Ֆինանսավորման նախապայմանը կայանում է նրանում, որ առաջադրանքները և նախագծերը առաջադրվեն, մշակվեն և իրականացվեն երկու կողմերի հետ միասին: Առանց դաշնային նախարարության համագործակցության աջակցության (BMZ) համաձայնեցված նպատակները կարող են ունենալ շատ փոքր ինտենսիվություն:

Հոդված 5

Հուշագիրը հաստատում է գործընկերների միջև համագործակցությունը ստորագրման օրվանից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նախատեսվում է այս ժամկետից դուրս հետագա համագործակցության շարունակում, որը մինչև հուշագրի ժամկետի ավարտը կվերահամաձայնեցվի:

Հուշագիրը ստորագրվելու է երկու օրինակով՝ հայերենով և գերմաներենով, գործընկեր կողմերի վարչական պաշտոնյաների կողմից:

| | |
|---|---|
| Արմավիրի մարզ | Բուրգենլանդ շրջան |
| Էդվարդ Հովհաննիսյան | Գյոտց Ուրլիխ |
| Մարզպետ | Դաշնային շրջանի ղեկավար |

Նաումբուրգ, 15.11.2022